KUNSTSTIFTUNG SACHSEN-ANHALT

GOETHE-ZENTRUM KOOPERATIONSPARTNER

GOETHE INSTITUT

Կացության ծրագիր Սաքսոնիա-Անհալթում

Սաքսոնիա-Անհալթի արվեստի հիմնադրամը և Երևանի Գյոթե կենտրոնն առաջարկում են ժամանակակից հայ արվեստագետների համար աշխատանքային կրթաթոշակ՝ նախատեսված Սաքսոնիա-Անհալթում 2-ամսյա կացության համար:

Սաքսոնիա-Անհալթի արվեստի հիմնադրամի և Երևանի Գյոթե կենտրոնի կողմից առաջարկվող աշխատանքային կրթաթոշակը ծառայում է արվեստագետների գեղարվեստական նվաճումների խթանմանը:

Կրթաթոշակը տարածվում է արվեստի բոլոր բնագավառների գեղարվեստական նախագծերի վրա: Կարևոր է գեղարվեստական նախագծի ինքնատիպությունը, որակը և իրագործելիությունը:

Տվյալ դրամաշնորհի նպատակն է աջակցել Հայաստանից ժամանած արվեստագետներին իրենց գեղարվեստական նախագծերի իրականացման գործում, խրախուսել նոր նախագծերը և խթանել Հայաստանի և Գերմանիայի մշակութային համայնքների միջև համագործակցությանը:

Կացության ծրագրի շրջանակում աջակցվող արվեստագետներին Սաքսոնիա-Անհալթում գտնվելու ընթացքում կհատկացվի **ամսական 1500 եվրո**: Բացի այդ, կփոխհատուցվեն նաև **ճանապարհորդության և կացության ծախսերը**:

Մասնակիցների աշխատանքային նախագծերը, որպես կացության ծրագրի մաս, կներկայացվեն Սաքսոնիա-Անհալթում, այնուհետև նաև Երևանի Գյոթե կենտրոնում:

Ո՞վ կարող է դիմել:

Բոլոր անկախ արվեստագետները, որոնք բնակվում և ստեղծագործում են Հայաստանում: Աշակերտներն ու ուսանողները, ցավոք, իրավունք չունեն դիմելու:

Դիտարկվում են հայտեր հետևյալ ոլորտներից՝ տեսողական, կիրառական և կատարողական արվեստ, պար և խորեոգրաֆիա, գեղարվեստական լուսանկարչություն, գրականություն, երաժշտություն, կինո, դիզայն, ճարտարապետություն և մեդիաարվեստ, ինչպես նաև միջդիսցիպլինար նախագծեր:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- Ինքնակենսագրություն (մանսագիտական ուղին և նախկինում առկա դրամաշնորհները)

- Գեղարվեստական պորտֆոլիո՝ վերջին 3 տարվա աշխատանքներով (խնդրում ենք տեսանյութերը ուղարկել YouTube/Vimeo-ի միջոցով)

- Գեղարվեստական նախագծի և նպատակների նկարագիր/նախագծի ուրվագիծը կրթաթոշակի ընթացքում (առավելագույնը 300 բառ)

Ընտրության կարգը

Կրթաթոշակները հաստատվում են Սաքսոնիա-Անհալթի արվեստի հիմնադրամի, Գյոթե կենտրոնի Երևանի փորձագետների և հայկական մշակութային դաշտի փորձագետներից կազմված անկախ ժյուրիի հետ խորհրդակցելուց հետո:

Դիմելու վերջնաժամկետ՝ 10. 02. 2024 թ.

Խնդրում ենք ուղարկել Ձեր դիմումի փաստաթղթերը որպես մեկ ընդհանուր PDF փաստաթուղթ (առավելագույնը 5 ՄԲ չափով) հետևյալ էլ. հասցեին՝
info@goethe-zentrum.am

Հարցերի դեպքում կարող եք դիմել մեզ՝ գրելով **info@goethe-zentrum.am** էլ. հասցեին:

KUNSTSTIFTUNG SACHSEN-ANHALT

GOETHE-ZENTRUM KOOPERATIONSPARTNER

GOETHE INSTITUT

Residency program in Saxony-Anhalt

The Saxony-Anhalt Art Foundation and the Goethe Center Yerevan are offering a work scholarship for a 2-month residency in Saxony-Anhalt for contemporary Armenian artists

The work scholarship offered by the Saxony-Anhalt Art Foundation and the Goethe Center Yerevan serves to promote individual artistic achievements.

The scholarship supports artistic projects in all disciplines. Originality, quality and feasibility of the artistic project are required. The awarding of work grants is intended to enable concentrated work on a new project.

The aim of the working grants is to support artists from Armenia in the realization of their artistic projects, to encourage new projects and to promote exchange between the artistic communities in Armenia and Germany.

The artists supported as part of the Armenian residency program receive a monthly financial allowance of **1,500 euros** for the duration of their stay in Saxony-Anhalt. In addition, **travel and accommodation costs** are covered locally.

The scholarship applicants' projects are presented publicly in Saxony-Anhalt as part of the residency program. Following the residency, the project results will be presented at the Goethe Center Yerevan.

Who can apply? Freelance artists with their main place of residence in Armenia. Pupils, students and people in initial training are unfortunately not eligible to apply.
Applications from the following disciplines are considered: Visual, applied and performing arts, dance and choreography, artistic photography, literature, music, film, design, architecture and media art, as well as interdisciplinary projects.

Application documents
- Curriculum vitae with artistic career and previous funding
- Significant artistic portfolio with works from the last 3 years (please link videos via YouTube/ Vimeo)
- Explanation/project outline of the artistic project and the objectives during the scholarship stay (max. 300 words in total)

Selection procedure
The scholarships are approved after consultation with an independent jury of experts from the Saxony-Anhalt Art Foundation, the Goethe Center Yerevan and an expert from the local Armenian art scene.

Application deadline: 10. 02. 2024
Please send your application documents as a single PDF document (with a maximum size of 5MB) to the following e-mail address: info@goethe-zentrum.am

If you have any questions, you can reach us at info@goethe-zentrum.am